

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9756

3

С192В.№646

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԶԵՂԱՑՄԱՆ
ԽԱՐՈՒՅՆԿԻ ՇՈՐՏՁԵԼ

Զեղաց առաջին

ՄԵՐ ՅԵՐԱՎՐՄԵՐ
ԱՄԲՈԴ ԱՇԽԱՐՀՈՒՄ



ԲԻБԼԻՈԹԵԿ
ИНСТИТУТА
ВІДОНОВЕДЕНИЯ
Академії Наук
СССР

ՀՐԱՄԱՆ. Հ. Լ. Կ. ՅԵ. Խ. ԿԵՆՑԱԼՄԻԿ ԿԻ
ՊԵՐԵՐԵՐԻ ԿԵՆՏՐ. ՎՎՈՒՐՁԵԼ

1925

ՅԿԻՄ

Ա-66

1373

Ա

ՊԵՐԿՈՐԱԿԱՆ ԶՐՈՒՅՆԵՐ
1475 ԽԱՐՈՒՅՆԿԻ ՇՈՒՐՋԸ


ETOS ԽՈՅԵՑ 83
24 SEP 2006

1 DEC 2009

ՅԿԻՄ
Մ-66

ՄԵՐ ՅԵՂԲԱՅՐՆԵՐԸ
ԱՄԲՈԼՃ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ԶՐՈՒՅՆ ԱՌԱՋԻՆ



ՀՀ-ՀՀՕՏ
ՀՐԱՏԱՐԱԿ. Տ. 1. Կ. ՅԵ. Մ. ԿԵՆՏՎՈՒՆԻ ԿԻՑ
ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ԲՅՈՒՐՈՅԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԿADEMİYİ

INSTITUTA
DOSTOVEDENII
Akademii Nauk
SSSR

1925

28 JUN 2013

9756

S SEP 2008

1 DEC 2008

ՊԻՌԱԵՐՆԵՐ!

Զեզանից վորհե մեկը մեր ամբողջ
այս մեծ աշխարհը պտտելու և սեփա-
կան աչքերով ամեն ինչ տեսնելու մա-
սին արդյոք յերբեւ մտածել ե: Ինչեր
չեյիք տեսնի գուք այն ժամանակ:

Ամերիկայի հսկա քաղաքները մին-
չե յերկինքը հասնող շենքերով, յելեք-
տրական, ոգային և ստորյերկրյա գը-
նացքներով, ահոելի գործարաններով
և ամենուրեք շարժվող մարդկային ա-
լիքներով. լեռներ, վորոնց ծոցից վոս-
կու ավագ են հանում: Պլանտացիաներ,
վորտեղ սևամորթ բանվորները աշխա-
տում են իցանե սաղավարդներով ու
ավտոմատիկ ատրճանակները կողքերին



60/73-67
Գուարեպ. 2025 Տիրաժ 5.000

Գետհատի 2-րդ տպարան Յերեանում

կանգնած չար անզիփացիների հսկողության ներքու:

Յեվրոպական նավահանգվիստներ,
վորտեղից գուրս են զալիս ծանր ու
աշխարհի բոլոր կողմեր գնացող ով-
կյանոսային շողենավերը:

Դուք կտեսնելիք բոլոր լեզուներով
խոսող մարդկանց, սևամորթներին, սպի-
տակ և գեղիններին, վորոնք աշխատում
են գաղցանի ժոտ, պարապում են
վորտորթյամբ, տպում ձնե տը-
նակներում:

Յեկ գիտեք պիտներներ, ուր ել
վոր գուր զնայիք նույնիսկ յերկրուգն-
դի ամենախուլ անկյունում, ամենուրեք
գուք կը պատահեք աղօների և աղջիշ-
ների, վորոնք լնկերաբար կը սեղմեն
ձեր պարզած ձեռքր:

Փոքրիկ չինացին, շիկահեր Ֆինն,
քրանսիացի զվարի մանուկը, տեսնե-
լով ձեր պիտներական նշանը, բարե-

կտմաբար կը մոտենա ձեզ, ինչպես
հոգնած ճամբորդը մոտենում ե ճանա-
պարհի յեղրին վառած խարույկի կը-
րակին:

Ինչու ապա պիտներներ, մենք ամ-
բողջ աշխարհում բարեկամներ ունենք:
Վորովհետեւ մենք կանգնել ենք այն
գրոշի տակ, վորի տակ բոլոր յերկր-
ների բանվորները պայքարում են ա-
զատության համար:

Բոլոր նրանք, ով տեսնում ե այն
գրոշը, վորի վրա գրված ե «Պրոլետար-
ներ բոլոր յերկրների միացեք» — իրար
բարեկամ են վոչ միայն կյանքի այլ և
մահու դեպքում:

Յերկրագնդի բոլոր անկյուններում
բանվորները աշխատում են գործարան-
ներում, դաշտերում, պլանտացիանե-
րում արհեստանոցներում, հանքերում...
Այդ գործարանները, Փաբրիկաները,
հողերը բանվորներին չեն պատկանում,

այլ պատկանում են հարուստներին:
Հարուստները բանվորներին ստիպում
են աշխատել մեքենաների վրա և այդ
աշխատանքի համար վողորմելի վարձա-
տրություն են տալիս, վորը բավական
է սովոր չմեռնելու համար միայն:

Մեքենաների և հողերի տերերը ապ-
րում են բավականության ու ճոխու-
թյան մեջ իսկ բանվորները ու նրանց
ընտանիքները հազվա-հազ որերը քաշ են
տալիս:

Բայց բանվորները չեն ցանկանում
հարուստների ազատազուրկ ստրուկները
լինել... Նրանք պայքարում են իրենց
կեղեգողների դեմ, չվախենալով վոչ
բանակներից, վոչ դատարաններից, վոչ
վոստիկանությունից, վոչ յեկեղեցուց
և վոչ բանտերից:

Յերբ բանվորները հաղթեն, նրանք մի
այնպիսի աշխարհ կը կառուցեն, վորտեղ
բոլորը հեշտ և ազատ պիտի ապրեն:

Բանվորների պայքարը ղեկավարում
են ամենաանվեներ, անձնազոհ, փորձված
գլուխից մարդիկ: Այդ մարդիկ համա-
խմբված են իրենց կուսակցության
շուրջը, վոր կոչվում ե Կոմունիստա-
կան կուսակցություն:

Բայց այդ պայքարը ոժվար ե և
ծանր. վորպեսզի այդ պայքարից հաղ-
թող դուրս գալ բանվորները պետք ե
լարեն բոլոր ուժերը, ոգնության կան-
չեն իրենց ազատներին, կանանց և այդ
կովի համար պատրաստեն իրենց փոք-
րիկ յերեխաներին: Ահա թե ինչու բո-
լոր պատահնիներն ու աղջիկները, վո-
րոնք չեն ուզում սարուկ լինել, համա-
խմբվում են Կոմունիստական Յերի-
սաւարդական Միուրյան շուրջը և
բանվորներին ոգնում են հաղթության
համար: Այդ նույն պատճառով եւ
բոլոր յերկրներում, բանվորների տաս,
տասյերկու և տասնչորս տարե-

կան տղաներն ու աղջիկները համա-
խմբում են իրենց կոմունիստական Պա-
տասնեկալան Խմբերի շուրջը, վորպեռ-
զի պատրաստվեն պայքարի համար և
իրենց հայր բանվորներին ոգնեն հաղ-
թելու:

Ով կովում ե բանվորների շահերի
համար, վոր յերկրից ել վոր նա լինի,
ինչ լեզվով ել վոր խոսի, -այդ փոք-
րիկ մարտիկները ընդունում են նրանց
վորպես իրենց յեղբայրները:

Խորհրդային Միության պիտներնե-
րիսնը նույնական ընդունում են, վոր-
պես իրենց յեղբայրներին, վորովհեակ
գիտեն, վոր մենք պայքարում ենք
բանվորների շահերի համար և վոր ոռու
բանվորները հաղթելով իրենց հարուստ-
ներին այժմ կառուցում են նոր ու ա-
զատ կյանք:

Ամբողջ աշխարհում, բոլոր Փոքրիկ
մարտիկների, բոլոր պատանի պիտներ-

ների նպատակը մի ե՝ բանվորների
ազատագրումը: Նրանք բոլորը քայ-
լում են մի դրոշի տակ ահա դրա հա-
մար ե, վոր մենք բոլոր յերկրներում
նույնիսկ այստեղ, վորտեղ յերբեք չենք
յեղել, հավատարիմ բարեկամներ ու-
նենք: Շատ յերկար ժամանակ չե, վոր
բանվորների յերեխաները սկսել են
համախմբվել և խմբեր (կոլեկտիվներ)
կազմել: Պատանիների առաջին խումբը
1920 թ. առաջ յեկավ Գերմանիայում:

Եեվ այն ժամանակ յեկ այժմ Գեր-
մանական բանվորությունը շատ ծանր
վիճակում ե գտնվում, 1919 թվին
Ֆրանսիացիների հետ ունեցած անհա-
ջող պատերազմի ժամանակ, Գերմա-
նական բանվորությունը ապստամբվեց
և Վիլհելմ II-ի իշխանությունը տա-
պահեց: Բայց փոխանակ իշխանությու-
նը իրենց ձեռքը պահելու, ինչպես այդ
արին ոռու բանվորները, նրանք յեն-

թարկվեցին մենշեիլների խաքերայություններին, իշխանությունը թողեցին նրանց իսկ գործարանները — հարուստներին։ Մենշեիլները իշխանությունից ոգտվելով, կանգնեցրին Գերմանական հեղափոխությունը, զինված ձեռքերով ձգմեցին հեղափոխական բանվորներին և սկսեցին ոգնել գերմանական սպառներին ու կալվածատերերին, վորոնք կողմանակից եյին գահընկեց «կայզերին»։

Բանվորների վոգմուրությունը ընկավ, իսկ սպաներն ու հարուստները պատրաստվում եյին Վիլհելմին նորից գահ բարձրացնել։ Դպրոցներում սկսեցին նորից Վիլհելմյան հիմնը յերգել փողոցներում ձերբակալում եյին բոլոր նրանց, ով ցանկանում եր բանվորական միտինդ գումարել (այդպես սպանեցին յերիտասարդության առաջնորդ Կարլ Լիբկնեխտին և Ռոզա Լյուքսեմբուրգին), տերերը գործարաններում տան-

ջում եյին անչափահասներին, իսկ ուսուցիչները բուռնցքով եյին ծեծում բողոքող յերեխաններին։

Պրոլետարիատի յերեխաններն արդեն դդալով ազատության վոգին, սկսեցին կազմակերպվել, իսկ կոմյերիտականները նրանց ոգնության յեկան։ Պատանիները սկսեցին դպրոցում սպառակ գվարդիական ուսուցիչների դեմ դուրս գալ ու խոսել, նրանց անարդարությունների գեմ, նրանք սկսեցին պահանջել ազատելու վաստիկանության կողմից ձերբակալված իրենց հայրերին։ Դրա համար բանվորների յերեխաններին պատժում եյին։ դպրոցներից դուրս եյին շպրտում հետապնդվում եյին ամենուրեք, բայց փոքրիկ հեղափոխականները վոչնչից չեյին վախենում և շարունակում եյին իրենց պայքարը։

Այդ յերեխաններից եր, վոր ստեղծ-

վեցին առաջին կոմունիստական պատահնեկական խմբերը: Նրանց որինակին հետեւցին մյուս յերկրների պատահները և շուտով պատահնեկական շարժումը տարածվեց յերկրագնդի բոլոր ծայրերում:

Գերմանիայում.—Այժմ արդեն 500 պատահնեկական խմբեր կան, զորոնք իրենց շարքերն են հավաքել 40,000 պատահնի կոմունարների—աշխատանքային կյանքի պիոներների: 1922 թ. ամառը Սուլլա քաղաքում կայացավ նրանց առաջին համագերմանական համագումարը, վորին ներկա եյին մի քանի հարյուր պատգամավորներ: Գերմանական պատահնեկական խմբերը լույս են ընծայում «Պատահնի ընկեր» մեծ շաբաթաթերթը:

Անգլիայում.—Պատահնեկական շորժումը ծագեց Գերմանիայի հետ միաժամանակ: Այն բանվորների յերեխա-

ները, վորոնք չերին ուզում մտնել հարուստների ստեղծած բոյ-սկառական կազմակերպության մեջ, կերպակի որերը հավաքվում եյին և կոմունիստների զեկավարությամբ պատրաստվում եյին հեղափոխական աշխատանքի համար: Պատահնեկական կոմունիստական շարժումը սկսեց արագորեն տարածվել բոլոր յերկրներում, նույնպես արագ, ինչպես կրակը տարածվում է դաշտում և առաջ և ընթանում առեհի կերպով: Բոլոր յերկրներում բանվորական յերեխաները կոմիերիտականների գեկավարությամբ, սկսեցին խմբեր կազմել և նրանց թիվը որեցորի ավելանում եր:

Անգլիայում.—Մեր խմբերում հաշվում ե. 1,500 պատահնի ընկերներ (20 խմբում): Նրանք այնպես ուժեղացան, վոր, (Տ. Տ. Տ.) սոցիալիստական պատահնեկական խմբերը անցան նրաց կողմը:

Այդ խմբերը ունեին 300 տղա և աղջիկ անդամներ:

ԶԵԽՈՆ-ՍԼՈՎԱԿԻԱՅԻ պատանեկական խմբերում կազմակերպված են 5,000 պատանի: Չնայած վոստիկանության հալածանքներին, նրանք աճում են, աճում և և նրանց ազգեցությունը: Նույնիւնիկ բոլոկառաներից մի քանի ուժեղ խմբեր անջատվեցին (1000 մարդից ավելի) և կանգնեցին մեր կարմիր դրոշների տակ:

ՅԱՅԻՆԻԱՅՈՒՄ. — Կոմունիստական պատանեկական խմբերը իրենց մեջ են համախմբում 3000 պատանիների և այդպիսները կան բոլոր մեծ քաղաքներում (Փարիզ, Լոնդոն, Մարսել, և այլն) նրանց նշանն և մուրճ և մանգաղ վորը կրում են իրենց գլխարկների վրա:

ԻԱԼԻՅԱՅՈՒՄ. — Մեր խմբերի շուրջն են հավաքված 4,000 բանվորական յերեխաներ: Նրանք սկսեցին կազմակեր-

պվել 1920 թվից, յերբ իտալական բանվորները գրավում եյին գործարանները, և դուրս եյին անում հարուստներին: Բանվորների յերեխաները գրաված գործարանների մեջ կապ եյին պահպանում, աշխատում եյին վորպես սուրբ հանգակներ և փոստատարներ: Այդժամանականից եր, վոր իտալիայում սկսվեց կոմունիստական պատանեկան շարժումը:

ՆՈՐՎԵՋԻԱՅՈՒՄ. — 50 խումբ կա, վարը համախմբում ե 6,000 պատանիներ: Նորվեջիական ընկերները հրատարակում են իրենց սեփական թերթը:

ՇԼԵԴՎԻԱՅՈՒՄ. — Նույնպես լույս ե տեսնում կոմունիստական պատանեկական թերթը, վորը հրատարակվում ե մեր պատանեկական խմբերի կողմից:

Պատանեկական խմբերը ունեն 1500 անդամ:

ՖԻՆԻԱՆԻՎԻԱՅՈՒՄ. — Կոմունիստա-

կան պատանեկական շարժումը գոյություն ունի 1920 թվից, յերբ կոմունիստները առաջվա անկուսակցական «Փինլանդիայի կազմակերպված պատանիների միության» մեջ մեծամասնություն շահեցին: 90 խմբում կազմակերպված են 9,000 մանուկներ: Յերկու ամիսը մեկ անգամ լույս ե տեսնում «Կարմիր Դրոշ» պատանեկական հանդես: Պատանիներից շատերը 1918 թ. պրոլետարական հեղափոխության ժամանակ մասնակցում ելին կարմիր դվարդիական խմբերում, կազմելով «կապի վաշտեր»:

Նվեցարիայում նույնպես վազուց ե վոր գոյություն ունի բանվորական յերեխաների շարժումը: Այդ պատանիները կազմակերպված են 30 խմբերում, թվով 1,200: Նրանց համագումարը կայցավ փարիզյան կոմունայի որը 1923 թվին մարտի 18-ին:

Ի ուղարիայում. — Կոմունիստական պատանեկական շարժումը ուժեղ է, այնտեղ կազմակերպված են 3,000 պատանի:

Բանվորների յերեխաներից — պատանի պիոներների խմբեր գոյություն ունեն Յեվրոպայի մյուս յերկրներում ևս՝ Հարավ-Սլավիայում, Ավստրիայում, Հոլանդիայում, ևսանիիայում և ուրիշ տեղերում:

Սակայն վոչ միայն Յեվրոպայում այլ և աշխարհի բոլոր հինգ մասերում պատանի պիոներները կազմակերպվում են իրենց կոմունիստական պատանեկական խմբերի շուրջը:

Հյուսիսային Ամերիկայում. — Որինակ Ռուսաստանի սովի ժամանակ, Նյու-Յորքում և մյուս քաղաքներում սովյացիներին ողնելու համար կազմակերպվեցին «Կարմիր հետախույզների» պատանեկական խմբեր, վորոնք հիմք



ծառայեցին պատահնեկական շարժմանը Ամերիկայում:

Արգենտինայում. — 1922 թվին կազմակերպվեցին 300 անդամ ունեցող 6 խմբեր:

Մելիսիկայում. — Շատ պատահնիներ կազմակերպված են Կոմյերիամիության շարքում:

Հնդկաստանում (Հոլանդական). — Կոմունիստաների զեկավարությամբ, կը ըստի գեմ պայքարելու համար ստեղծվել են պատահնեկական խմբեր:

Ավստրալիայում. — Մեծ քաղաքներում արգեն մի քանի հարյուր պատահնիներ համախմբված են կոմունիստական դրոշի տակ:

Հարավային Աֆրիկայում. — (Իռհանսսենքուրգ, կապշտագո) 200 պատահնիներ կազմակերպված են կոմունիստական խմբերում:

Այդպես յերկրագնդի բոլոր ծայրե-

րում՝ ֆինլանդիայի ցուրտ ժայռերում, Հնդկաստանի կիզող արեի տակ, Ֆրանսիայի աղմկալի քաղաքներում, պատերազմի հետևանքով ավերված Գերմանիայում բանվորների յերեխաները կադմակերպվում են բանվոր դասակարգի շահերի պաշտպանության պայքարի համար, վորպեսզի միանան Խորհրդային Միության պիոներների հետ:

1922 թ. սեպտեմբերին, Գերմանիայի մայրաքաղաք Բերլինում, կայտցագ կոմունիստական պատահնեկական խմբակների զեկավարների միջազգային կոնֆերենցիան, վորին մամակցում ելին համարյա բոլոր յերկրների ներկայացուցիչները: Այսպես են դրվում կոմունիստական պատահնեկական ինսերեացիոնալի հիմքերը:

Ամբողջ աշխարհի կոմունիստական պատահնեկական խմբերը, բոլոր պատահնի պիոներները առանց ձեռքերը

ծալելու աշխատում են բանվորների հաղթանակի համար, պատրաստվում են փոխարինելու իրենց հայրերին, յեր նրանք դուրս կուն աշխատանքի բանակի շարքերից։ Նրանք սովորում են իրենց խմբերում, ծանոթանեւմ են հեղափոխական պայքարի փորձի հետ, խաղերի ընթացքում սովորում են լինել ըմբռնող, ճարպիկ և վճռական։ Կյանքի բոլոր դեպքերին նրանք մասնակցում են բանվորների կողմը անցած, պահպանում են բանվորների ժողովները վաստիկանությունից, տարածում են կոմունիստական թերթերն ու կոչերը և այլն։

Անգլիայում, 1923 թվին նրանք դպրոցում՝ հարուստաների գեմ մզվող բանվորների պայքարին ոժանդակելու համար դասադուլ արեցին։ Նրանք դպրոցի ներսում յեռանդուն աշխատանք են տանում, տարածելով աշա-

կերտների վրա կոմունիստական ազգեցություն և պայքարելով սպիտակ գվարդիական ուսուցիչների հետ։ Նըրանք կազմակերպում են իրենց սեփական թատրոնը, վորի համար իրենք պիյեսներ են գրում բանվորների՝ հարուստաների գեմ մզվող կովի մասին։

Նրանք եքսկուրսիաներ ու զբուհներ են կազմակերպում, վորով բանվոր յերեխաներին քաղաքի ողազուրկ նկուզներից դուրս են բերում լայն գաշտերը, աղատ ողի մեջ։ Նրանք հրատարակում են իրենց ձեռագիր թերթերն ու հանդեմները։

Նրանք տներից զրքեր հավաքելով ստեղծում են խմբակներում իրենց զրադարանները, խմբակի աշխատանքներին միջոցներ հայթայթելու համար, նրանք պարապում են զանազան ձեռագործերով, աշխատում են կազմաներում, հյուսնություն են անում,

փայտերից իրեր են կտրում, բաց նաև
մակներ են նկարում և այլն:

Կոմունսիտ մանուկները հասակա-
վորների մեջ ևս աշխատանք են տա-
նում. այսպես նրանք իրենց խմբակ-
ներին կից կազմակերպում են ծնողա-
կան յերեկոյթներ, տանը և իրենց
հասակակիցների ծնողների մեջ ագի-
տացիա յեն մղում, հաճախում են հա-
սակավոր բանվորների ժողովներին:

Յերբ մեզ մոտ սով եր—մեր պա-
տանի ընկերները բոլոր յերկրներում
զրկում եյին իրենց շատ անհրաժեշտ
բաներից վարպեսզի կարողանային ող-
նել սովի ճիբաններում տառապող յե-
րեխաններին:

Գերմանիայում պատանեկական խո-
բերը հանգանակություններ եյին տ-
նում, կողեկներով փող եյին անտե-
սում և այդպիսով Շվեյցարիայի և Զե-
խո. Սլովակիայի մանուկների հետ միա-

սին վորոշ զումար հավաքում ուղար-
կում եյին Ծուսասաան: Այդ փողերով
Զելյարինսկում սովյալ յերեխանների
համար մանկատուն բացվեց:

Զեխո-Սլովակիայում մանուկները
մանում եյին բանվորների բնակարան-
ները, թատրոնները, ման եյին գալիս
փողոցներում զանդ եյին տալիս, և
այդպիսով փող հավաքում ուղարկում
եյին Ծուսասաանի քաղցած յերեխա-
ններին:

Իտալիայում պատանեկական խմբե-
րը մի շաբաթվա ընթացքում մեծ զու-
մար եյին հավաքել:

Բայց հարուսաները մեր կոմու-
նիսական պատանեկական խմբերին
հեղափոխական գործունեյության հա-
մար շատ խիստ հալածանքի յեն յեն-
թարկում: Բուրժուական պետություն-
ների կառավարությունները, վոստի-
կանությունը և սպիտակ-գվարդիական

ուսուցիչները հասկանում են վոր բան-
վորների յերեխաները — կոմունիզմի
պատասխանի պիտուներները պատրաստվում
են վոչ թե կյանքի այլ մահու կոիվ
մղել անարդարության ու կեղեքման
կարգերի գեմ:

Այդ պատճառով վոստիկանությու-
նը ամեն կերպ խանգարում է պատա-
նեկական խմբերի աշխատանքներին,
կառավարությունը արգելում է, իսկ
ուսուցչությունը դուրս է վճնդում
դպրոցից այն պատանիներին, վորոնք
աշխատում են մեր խմբերում:

Այսպես որինակ՝ Զեխո-Սլովակիա-
յում կառավարությունը մի որենք հրա-
տարակեց թե «պատանիների կրթու-
թյունը-կառավարության գործն ե» և
այդ պատճառով առ ցրեց մեր խմբե-
րը և փուլեց կոմունիստական պա-
տանեկական թերթը, և գրավեց նրա
բոլոր համարները: Սակայն պատանի-

ները շարունակում են հավաքվել, գաղտ-
նի բնակարաններում, կամ քաղաքից
դուրս, թագնվելով վոստիկանության
հետապնդումներից, բաց և այնպես չ
դադարեցնելով աշխատանքները:

Իտալիայում. — Ֆաշիստները (հա-
րուսաների գինված վարձկալ բանդա-
ները) քանդում, տակն ու վրա եյխն
անում այն շենքերը, վորտեղ հավաք-
վում եյխն պատանիները, ծեծում եյխն
նրանցից շատերին և նրանց ծնողնե-
րին, ցրում եյխն պատանեկական խմբ-
երը, վորոնք նույնպես, այժմ գաղտ-
նի յեն աշխատում:

Կոմունիստական պատանիների հետ
պայքարելու համար ֆաշիստները կազ-
մակերպում եյխն հարուստների յերե-
խաներին «Բալիլա» կոչվող խմբերով
վորոնք մասնակցում են բանվորների
մանուկների հանդեպ կազմակերպվող
բոլոր ձնշումներին ու հալածանքներին:

Գերմանիայում. — Շուցմանները գերմանական վոստիկանները) փողոցներում տղիտացիա անելու, պատերին կոչեր փակցնելու համար ձերբակալում են պատանիներին խլելով նրանցից կոմունիստական գրականությունն ու մանկական կոմունիստական հանդեսները: Մեկ անգամ Բերլինի փողոցներից մեկում վոստիկանությունը ձերբակալում է կոմունիստական պատանեկական խմբի դրոշի տակ քայլող մի 13 տարեկան տղալի: 60 պատանի ընկերներ գնում են ձերբակալվածի հետ վոստիկանատուն և հայտարարում «Ձերբակալեցեք և մեզ, մենք նրա բարեկամներն ենք»: Վոստիկանությունը վախենում է և ձերբակալված տղային ազատ և արձակում:

Եսոնիայում. — վոստիկանությունը ձերբակալում է 14 տարեկան տղաներին վորոնք մասնակցել են սպիտակ-

գվարդիականների կողմից սպանված իրենց ուսուցչի թաղման ցույցին: Ձերբակալված և վայրենաբար ծեծված երին տասյերեք մանուկներ: Յերբ պարլամենտում բանվոր-պատգամափորները պահանջեցին ձերբակալվածներին ազատ արձակել կառավարության ներկայացուցիչը հայտարարեց «այդ մանուկներին պետք է գնդակահարել»:

Նման որինակներ կարելի յե շատ բերել: Հարուսաները ամեն կերպ աշխատում են իշխանությունը իրենց ձեռքը պահել և սրով ու հրով վոչնչացնում են բոլորին, ով իրենց դեմ երինում:

Բայց հպարտորեն գլուխները բարձր պահած մեր փոքրիկ ընկերները կոմունիզմի անվեներ պիտիներները գնում են մասնակցելու այն մեծ պայքարին:

Դուք զիտեք ընկերներ, վոր յերբ ուսում բանվորները 1917 թվին ցարին

տապալեցին լոկ հետո հարուստներին
կալվածատերերին ու Փաքրիկատներին
ոտարազգի հարուստները — Նրանց կա-
ռավարությունները — Անդիման, Ֆրան-
սիան, Ամերիկան, Յապոնիան — ոգնու-
թյան յեկան ոռւս հարուստներին, ու-
ղաքեցին մեզ վրա իրենց զորքերը խեղ-
դելու Ռուսական հեղափոխությունը:

մեզ այն ժամանակ հաջողվեց պա-
հել բանվորաւզյուղացիական լշխանու-
թյունը, փրկել մեր խորհրդային հան-
րապետությունը, չնորհիվ այն բանի,
վոր բոլոր յերկրների հարուստների
միությանը մենք հակադրեցինք բոլոր
յերկրների բանվորների և չքափոր գյու-
ղացիների միությունը:

Գերմանացի, Անդիման և մյուս
յերկրների հեղափոխական բանվորները
վորտեղ իշխանության զլուխ կանգնած
են հարուստները ոկսեցին վրդովել և

պահանջեցին հետ կասեցնել իրենց
զորքերը Ռուսաստանից:

Եյսպես մեզ հաջողվեց փրկել Խոր-
հրդային Հանրապետությունը, բանվոր-
ների յերեխաների համար և ոտարազգի
հարուստների զորքերին զուրս վոնդեր
շնորհիվ բոլոր յերկրների բանվորների
բարեկամության: Այդ բարեկամության
մեջ ե մեր զլամափոր ույժը — մեր վերջ-
բական հաղթանակի զրավականը:

Ըսկերներ, վորպեսզի, դուք յերբեք
չմոռանաք ձեր լավագույն բարեկամ-
ներին ու յեղբայրներին — բոլոր յերկր-
ների փոքրիկ կոմսւիստներին, դուք
պետք ե նրանց հետ միշտ գրագրու-
թյան մեջ լինեք! հայտնեք նրանց ձեր
կյանքի և ձեր աշխատանքի մասին:

Նրանք ուրախ կը լինեն աշխարհիս
ամենատառաջին ազատ յերկրի պիտու-
րից տեղեկություններ ստանալ և կը

պատասխանեն ձեզ, նկարագրելով թե ի-
րենք ինչպես են պայքարում, աշխատում
և սովորում, և թե ինչպիսի զրկանքներ
են նրանք ստիպված լինում կրել:

Բացի գրանից, յուրաքանչյուր տա-
րի—հուլիս ամսում կազմակերպվում ե-
կոմունիստական պատանեկալան շաբա-
ժան միջազգային շաբաթ։ Այդ շաբաթ-
վա ընթացքում ամբողջ աշխարհի բան-
վորները գումարում են իրենց ժողով-
ները կազմակերպում են տոներ և միե-
նույն պահանջներն են դնում։ Այդ որը
նրանց յեղբայրանալու, մեր միջազգա-
յին բարեկամության որն է, մի որ, յերբ
մենք ցույց ենք տալիս, վոր բոլոր յեր-
կրների բանվորների յերեխաները ան-
քակտելի պողպատյա շղթայի մի մի ո-
ղակներն են։ Այդ շղթան չեն կարող
կոտրել, նույնիսկ մեր ամենառժեղ
թշնամիները։

Պատանի պիոներները—բոլոր յեր-

կրների բանվորների յերեխաների աջակ-
ցությամբ կը հաղթեն իրենց բոլոր թշ-
նամիներին։

Կեցցեն մեր պատանի բարեկամ-
ները ամբողջ աշխարհում։



ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԿՈՄՈՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ
ԿԱՄԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Գերմանիա. — «Պրոլետարական մանուկ» ամսագիր, «Պատանի ընկեր» 30,000 տիրաժով յերկարաթաթերթ

Միացյալ նահանգներ. — «Պատանի ընկեր» շաբաթաթերթ տիրաժը 10,000

Ֆինլանդիա. — «Կարմիր Դրու» յերկարաթաթերթ — 10,000 տ.

Նորվեգիա. — «Մանկական լրագիր» ամսագիր — 10,000 տ.

Ս. Շվեյցարիա. — «Պատանի ընկեր» ամսագիր 3,000 տ.

Եստոնիա. — «Մեր յերեխաները» ամսագիր 3,000 տ.

Շվեյցարիա. — «Պատանի ընկեր» ամսագիր 2,500 տ.

Շվեյցարիա. — «Մանկական լրագիր» ամսաթերթ — 2,000 տ.

Հելս-Սլովակիա. — «Կրակ» ամսաթերթ — 2,000»

Վրգենգինա. — «Ընկեր» ամսագիր — 2,000»

Հոլլանդիա. — «Պատանի ընկեր» ամսագիր — 2,000,

Հարավ-Սլավիա. — «Աղագո» ամսագիր — 2,000»:

ՅՈՒՐԱԲԱՆՉՅՈՒԹ

Կունեկուիվ, ողակ, դպրոց
կոմիտիտական բջիջ, կուսակ-
ցական բջիջ

Թիսե և բաժանուզագրվի

≡ „ՊԻՌՆԵՐ“ ≡

յերկառության հանդեսին

ՊԻՌՆԵՐՆԵՐԻ

ՏԱՐԱԾԵՔ ԶԵՐ ՀԱՆԴԵՍԸ

ԲԱԺԱՆՈՒԹՅԱԳՐՎԵՑԵՐԵՐ ՆՐԱՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0188072

ԽՍՀ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՀ ԲԻBLIOGRAPHI

90m

C.

1

2)

ԳԻՆՆ Ե 8 ԿՈՐ.